ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 07 ապրիլ 2018թ.

[redacted](ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted] տրված [redacted]ի կողմից), այուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից և ″ԷԿՈՏՈՒՆ″ ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ [redacted]գրանցման համար [redacted] հասցե՝ ք Երևան, Գ. Հարաթյան 21տ.), այսուհետ՝ ″Կատարող″, ի դեմս՝ տնօրեն [redacted] որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

Պայմանագրի առարկան

Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից տրված անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատանքային նախագիխծի, համար [redacted]շինթույլտվության հիման վրա և լիազորագրի սահմաններում և Պատվիրատուի անունից կազմակերպել ք. Երևան Դավիթաշեն Վարչական շրջանի [redacted] հասցեում Պատվիրատուի կողմից պլանավորված բնակելի առանձնատան կառուցման մասնակի շինարարական աշխատանքներ: Ըստ վերը նշված աշխատանքային նախագծի՝ հողային աշխատանքները, առանձնատան հիմքը, և ընդհանուր այդ աշխատանքները պետք է կատաված լինեն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ հաջորդուղ 6 (վեց) աշխատանքային օրվա ընթաղքում, եթե չկան Կատարողի գործողությանը խանգարող և կատարողի իրավասության մեջ չմտնող այլ հագամանքներ և տվյալ պարագայում Պատվիրատուի գրավոր պահանջով կարող է դադարացվել բոլոր աշխատանքները, Կակտարող կողմի հետ կատարել վերահաշվարկ՝ արդեն կատարված աշխատանքի և դեռ չկատարված աշխատանքի, արդեն ձեռք բերված նյութերի և ծառայութունների համար՝, որից հետո առջացած գումարային տարբերությունը հաջորդուղ 20 (քսան) աշխատանքային օրվա ընթաղքում Կատարողի կողմից հետ է վերադարձվի Պատվիրատուին:

Պատվիրատուն պարտավոր է՝

Վճարել Կատարողին վերը նշված ծառայության դիմաց ընդհանուր առմամբ 2500000 ՀՀ դրամ (երկու միլիոն հինգհարյուր հազար ՀՀ դրամ) գումար պայամանագրի ստորագրման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում վերը նշված ժամկետում Պատվիրատուի կողմից վճարումը կատարելուց հետո: Պայմանագիրը ամբողջովին ուժը կորցնում է համապատասխան կազմված կատարողական ակտի ստորագրման պահին:

Եզրափակիչ դրույթներ

Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է երրորդ անձանց որևէ կերպ չհրապարակել սույն պայմանագրի հետ կապված և/կամ պայմանագրի կատարման ընթացքում հայտնի դարձած կոմերցիոն, ֆինասական ու տեխնիկական բնույթի տեղեկատվություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվախ դեպքերի: Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով , երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու՝ [redacted] (ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted] տրված [redacted]ի կողմից) Անուն Ազգանուն /ստորագրություն	Կատարող՝ ″ԷԿՈՏՈՒՆ″ ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝[redacted] հասցե՝ ք Երևան, Գ. Հարաթյան 21տ.) Էվոկաբանկ ՓԲԸ Հ/Հ 16600-03870340100 Տնօրեն՝ [redacted] Կ.Տ. /ստորագրություն